

ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆԸ և  
ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԻՍԼԱՄԻՆ ԲՆՈՐՈՇ ԵՐԿՈՒ  
ՈՐԱԿՆԵՐ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

Հեղինակ

*Դոկտոր Աբդուլ-Ռահման Էլ-Շիհա*

د. عبد الرحمن بن عبد الكريم الشيخة

Թարգմանությունը

المركز الأوروبي للدراسات الإسلامية

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

*& Աննա Ռ. Հակոբ*

ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆԸ և  
ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԻՍԼԱՄԻՆ ԲՆՈՐՈՇ ԵՐԿՈՒ  
ՈՐԱԿՆԵՐ

*Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա*

*Թարգմանությունը*

**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (E.I.R.C)**

*& Աննա Ռ. Հակոբ*

Ստուգող հանձնաժողով:

*Աբու Առամ*

*© Գրքի բոլոր իրավունքները պատկանում են հեղինակին*

*Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա*

Հեղինակը թույլատրում է վերատպել կամ կրկին հրատարակել գիրքը, եթե որպես նպատակ ծառայում է գրքի անվճար տարածումը, որի ընթացքում արգելվում է կատարել փոփոխություններ:

Վերոնշյալ կանոնները պահպանելու և անհրաժեշտության դեպքում հեղինակը պատրաստ է տրամադրել գրքի բարձրորակ կրկնօրինակներ էլեկտրոնային վիճակով:

## Բովանդակություն

1. Ներածություն
2. ԻՍԼԱՄԸ և ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
3. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՏՔՈՒՄ
4. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄՈՒՄ ՇԱՐԻԱԹԻ ՀԵ ԿԱՊԱԿՑՎԱԾ
5. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՎԱՅԻ (ԿՈՉՈՒՄ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԱՌ ԻՍԼԱՄ) ՊԱՐԱԳԱՅՈՒՄ
6. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
7. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ՄԱՔՐՄԱՆ ՀԵՏ
8. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՈԹՔՆԵՐՈՒՄ
9. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
10. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՔՅԱՅԻ ԳՈՐԾՈՆՈՒՄ
11. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՔԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ
12. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՋԻ (ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅԱՆ) ԺԱՄԱՆԱԿ
13. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
14. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
15. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԺՈՒՄ
16. ԱՅՍ ՊԱՏԻՇՆԵՐԸ ՈՒՆԵՆ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

17. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏԱՆԴՆԵՐԻՆ
18. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՅՈՒԹՅԱՄԲ
19. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ՄԵՂՔԵՐԻ ՀԵՏ
20. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԼԱՎ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ
21. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ՄԱՐԴՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
22. ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԶ
23. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

# Ամենագթասիրտ Ալլահի անունով

## Ներածություն

Փառք Ալլահին և խաղաղություն լինի Մարգարե Մուհամեդին , նրա ընտանիքին և հետևորդներին:

Շատերը մեղադրում են Իսլամի ահաբեկիչ լինելը , բայց դա նրա նկարագրությունը չէ: Հետաքրքրությունը աճել է այն բանից հետո երբ շատերը ընդունում են այդ : Եվ գիտակցում են , որ այն ոչ մի փաստ չունի կապված այդ մեղադրանքների հետ : Բայց թարգմանությունները և բացատրությունները անձնական թշնամանքը Իսլամի և մուսուլմանների նկատմամբ անում է իր գործը: Կարելի է ասել , որ իսլամի ընդունմանը ոչ մուսուլմանների կողմից նպաստում է նրա դյուրին լինելը, հեշտ ընկալումը , հանդուրժողականությունը : Այնտեղ ամեն ինչ շատ պարզ ու դյուրին բացահայտված է ամեն ինչի մասին , ամեն հարցի շուրջ: Ամեն ինչ դյուրին է բայց միևնույն ժամանակ այն ունի իր պայմանները, իր համակարգերը : Այն հիմնված է ներողամտության և հանդուրժողականության վրա ներառելով Ամենակարող Աստծո իրավունքները : Չի մոռացվում նաև մարդու հոգեբանությունը և կառուցվածքը: Իսլամում թողության և ներման դռները միշտ բաց են ամեն մեկի առջև , չկա որևէ ժամանակ: Ալլահին գոհացնում է ամեն մի գոջում : Եվ այս գրքույկը կբացահայտի շատ բաներ կապված հանդուրժողականության և Իսլամի ներողամտության հետ:

Իսլամը կրոն է , որը Աստված բացահայտեց բոլոր Մարգարեներին և Առաքյալներին սկսած Մարգարե Ադամից (Խ.Ա.Ո.Ն) , մինչև Մարգարե Մուհամեդ : Ամենակարող Աստվածը ասում է .

**«Ճշմարիտ , միակ ընդունելի կրոնը Աստծո տեսանկյունից , Իսլամն է :» (3 : 19 )**

Յուրաքանչյուր մարգարեն կոչ է արել իր մարդկանց հավատալ Աստծո Միակ լինելուն և նվիրել երկրպագման բոլոր գործողությունները միայն Աստծոն , առանց զուգակցելու գործընկեր Նրան : Ամենաբարձրյալ Աստվածը ասում է .

«Նա հաստատել է ձեզ կրոն , որը Նա տվել է Նոյին և որը Մենք լուսաբանել ենք ձեզ , (Օ, Մուհամեդ ) , և որը Մենք տվել ենք Աբրահամին և Մովսեսին և Հիսուսին , հաստատելու կրոն և չբաժանելու նրա մեջ : Դժվար է նրանց համար , ովքեր զուգակցում են ուրիշներ Ալլահի հետ , առ այն ինչին դուք հրավիրում եք նրանց : Ալլահը ընտրում է Իր համար , ում Նա ցանկանում է և առաջնորդում է դեպի Իրեն ով երբևէ ետ է վերադառնում (դեպի Նա) :» (42:13)

Մարգարեները Մարգարե Մուհամեդի ժամանումից առաջ , ուղղարկվել էին բացառապես իրենց մարդկանց համար , օրենքները , որոնք Աստված տվեց նրանց էական էին միայն իրենց տվյալ ժամանակին : Երբ Մարգարեն մահանում է , մարդիկ շեղվում են տրված ուղերձից , և Աստված ուղարկում է ուրիշ մարգարե առաջնորդելու նրանց ետ , դեպի Ուղիղ Ճանապարհը : Այս Մարգարեն մեկ անգամ ևս կառաջնորդի մարդկանց երկրպագել միայն Աստծոն և գործընկեր չկապել Նրա հետ : Ամենաբարձրյալ Աստվածը ասում է .

«Եվ Մենք իրոք ուղարկել ենք ամեն ազգին մարգարե , {ասելով}, « Երկրպագեք Ալլահին և խուսափեք Թագուրից :» (Ալլահին գործընկեր կապելուց) : Եվ նրանց մեջ կային այնպիսիներ , ում Ալլահը առաջնորդել էր և նրանց մեջ կային այնպիսիներ , ում վրա սխալները (արժանապես ) հրամանագրված են : Այսպիսով շարունակիր երկրով և դիտիր ինչպիսին էր մերժողների ավարտը :» (16:36)

Բոլոր մարգարեների և առաքյալների մեջ վերջինը Մարգարե Մուհամեդն է (Խ.Ա.Ո.Ն ) : Նա ուղարկվեց երկար ժամանակ հետո , երբ չէր ուղարկվել ոչ մի մարգարե մարդկանց : Նա վերջինն է Մարգարեներից և Առաքյալներից : Նրա ուղերձը վերջինն է բոլոր աստվածային ուղերձներից առ մարդկությունը : Ամենաբարձրյալ Աստվածը ասում է .

«Եվ մենք ուղարկել ենք քեզ բազմակողմանի մարդկությանը , որպես զգուշացում և տեղեկություն բերող : Բայց մարդկանց մեծամասնությունը չգիտի :» (34:28)

Ըստ այն փաստի , որ այս Ուղերձը վերջինն է մարդկությանը , այն կրում է շատ տարբերիչ հատկություններ , որոնք նման չեն նախորդ ուղերձներին : Այն ներառում է հարմարվող կանոններ բոլոր երևույթներին , որոնք եկել են և կգան մինչ ժամանակի ավարտը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց .

**«Եվ Մենք ուղարկել ենք քեզ (Օ, Մուհամեդ ) , ինչպես գութ աշխարհներին :» (21:107)**

Մարգարե Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն ) ուղերձը ներառում է բոլոր հարցերը , որոնք կապված են անհատի , նրա հասարակարգի , և ինչպես համագործակցել միմյանց հետ : Այն նաև համապատասխանում է բոլոր ժամանակներին և վայրերին : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

**«Այս օրը , նրանք ովքեր չեն հավատացել , հուսահատվել են (պարտության մատնելու ) ձեր կրոնը; այսպիսով մի վախեցեք նրանցից , բայց վախեցեք Ինձանից : Այս օրը Ես կատարելության եմ հասցրել ձեզ համար ձեր կրոնը և ավարտել եմ Իմ բարեհաճությունը ձեզ և հաստատել եմ ձեզ համար Իսլամը ինչպես կրոն :»(5:3)**

Քանի որ հանդուրժողականությունը Իսլամական հավատքի տարբեվող բաղադրիչ է , մենք կլուսաբանենք , թե ինչպես այս տարբերիչ գործոնը կայմակալ է բոլոր իր վճիռներին : Մուսուլմանները պարտավոր են ներկայացնել երկրպագման գործողություններ ըստ իրենց ունակությունների լավագույնի : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

**«Ալլահը չի գանձում հոգուն , բացի (ինչ նրա ներքինի ) , իր հնարավորություններից :» (2:286)**

Մարգարեն ասել է . «Պահպանիր այն , ինչ ես սահմանել եմ քեզ համար , քանզի իրոք նրանք քեզանից առաջ , ավիրվել են Մարգարեներից տարբերվելով և հարցերով : Եթե ես արգելում եմ ձեզ որևէ բան , խուսափեք դրանից , և եթե ես հրամայում եմ ձեզ որևէ բան , արեք այդ այնքան որքան կարող եք :» (Բուխարի )

Իսլամական համակարգի օրենքում հանգստության և հանդուրժողականության հիմքը այն է , որ նրանք աստվածային օրինական համակարգեր են , որոնք հաշվի են առնում մարդու զգացմունքային կառուցվածքը և նրա հնարավորությունները : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է .

**«Նա ընտրել է քեզ և չի բարդել քեզ վրա կրոնում որևէ դժվարություն :» (22:78)**

Օրենքի Իսլամական համակարգը իրոք , պարզ համակարգ է , որը արդար է , հեշտ է ընկալվում և գործում է մեղմացնել դժվարությունները : Երբ այն հասկանում են ճիշտ , այն նույնպես սիրվում է բոլորից , ովքեր

լում են դրա մասին : Ուրախություն է գործի դնել այն և նույնիսկ անկողմակալ ոչ մուսուլմանները վկայում են այս փաստը : Մարդկանց վերաբերվելու հավասարությունը և արդարությունը տրամադրվում է բոլորին , անկախ հարստությունից , տարիքից կամ սեռից : Իսլամը օրենքի չափավոր համակարգ է , ոչ մի ուրիշ համակարգ անգամ մոտ չէ նրան իր չափավորությամբ և գեղեցկությամբ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

**«Եվ Ալլահը ցանկանում է հեշտացնել քեզ ( քո դժվարությունները ) և մարդկությունը ստեղծվել է թույլ :» (4:28)**

Արդարությունը Իսլամում ոչ միայն մուսուլմանների համար է , այլև նրանց , ովքեր ապրում են Մուսուլմանների մեջ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

**«Նրանք , ովքեր հետևում են անտառաճանաչ մարգարեյին , որի մասին գտել են գրված Թորայում և Ավետարանում , ով հրամայել է նրանց , թե ինչն է ճիշտ և արգելել է նրանց սխալը և օրինական է դարձրել նրանց համար ինչը լավ է և արգելել է նրանց վատը , և ազատել է նրանց իրենց բեռից և կապանքներից , որոնք նրանց վրա էին : Այսպիսով նրանք , ովքեր հավատացել են նրան , պատվել են նրան , աջակցել են նրան և հետևել են լույսին , որը ուղարկվել է նրա հետ , նրանք են ովքեր կլինեն հաջողակ :» (7:157)**

Հանդուրժողականությունը մի աստիճանն է Իսլամական օրենքում և հիմք է , որտեղ անհատին տրված է շարժունակություն , իրականացնել անձնական որոշումներ , որոնք համապատասխանում են Իսլամական ուղենիշին : Սա շատ ակնհայտ է Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) պատմության մեջ : Մի օրինակ է Մուադիի, նրա հետևորդներից մեկի , պատմությունը : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ուղարկեց Մուադիին , իր ուղեկցորդներից մեկին, Յեմեն : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց . **« Ինչպե՞ս դու կդատես :» Նա պատասխանեց . « Ես կդատեմ Ալլահի Գրքի պատվիրաններով , և եթե ես չկարողանամ գտնել այն այնտեղ , ես կգնամ Ալլահի Մարգարեյի սովորություններին , և եթե ես չկարողանամ գտնել այն այնտեղ , ես կկայացնեմ գիտական որոշում :»** Մարգարեն դրեց իր ձեռքը նրա ուսին և ասաց . **« Փառք Ալլահին , որ հեշտացնում է Ալլահի Մարգարեյին ընտրել ճիշտ անհատ այս դիրքի համար :»** ( Աբու Դաուդ )

Իսլամում մեզ տրված է ընդհանուր ուղենիշներ և սկզբունքներ , որոնցով մենք ապրում ենք մեր կյանքերը : Երբ նոր իրավիճակ է երևան գալիս , որը չի գտնվել նախորդ դարում և վճիռը ստացվում է Ղուրանից



կամ Սուննայից , որը համապատասխանում է իրավիճակին : Այս կանոններից են հետևյալները .

24. Սկզբունքը, որը կառավարում է բոլոր բաների էությունը այն է , որ նրանք թույլատրելի են օգտագործման համար (մինչ ապացուցված է հակառակը ):

25. Վնասող գործոնը պիտի հեռացվի և պիտի խուսափել նրանից :

26. Սարսափելի կարիքները թույլատրում են անօրինականը :

27. Հատուկ վնասը ( որը անհատական է ) կարող է հանդիսանալ , խուսափում մեծ վնասից :

Կան շատ ուրիշ կանոններ նման նրանց , որոնք հնարավորություն են տալիս Իսլամական օրենքին հարմարվել ամեն իրավիճակների և վայրերի :

## ԻՍԼԱՄԸ և ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ մենք խոսում ենք Իսլամում հանդուրժողականության մասին , Մենք ի նկատի չունենք կրոնի փոքրիկ բաղադրիչը, այլ ի նկատի ունենք Իսլամական հավատքի բանալին : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) ասել է . « **Ալլահին ամենասիրելի բանն է հանդուրժող հավատքը , որը համընկնում է մարդու բնական դիրքորոշմանը** :» (Բուխարի )

Իսլամը կառուցված է հանդուրժողականության մեթոդաբանության վրա : Ալլահն ասում է .

**«Եվ այսպես , մենք արել ենք ձեզ համայնք , որ դուք վկա լինեք մարդկանց և Մարգարեն կլինի վկա ձեզ : Եվ Մենք չենք արել Քիբլան (աղոթքի ուղղությունը ) , որին դուք դարձնում եք ձեր երեսը , բացի այդ Մենք արել ենք վկայություն , ով կհետևի Մարգարեյին , նրանցից , ով կշրջվի իր կրունկների վրա : Եվ իրոք , դժվար է բացի նրանցից , ում Ալլահը առաջնորդել է : Եվ երբեք Ալլահը չի պատճառի քեզ կորցնել քո հավատքը : Իրոք , Ալլահը Բարի և Գթասիրտ է մարդկանց :» (2:143)**

• Իսլամը հանդուրժող կրոն է կապված քաղաքական և արտաքին խնդիրների հետ : Մուսուլմաններին հրամայված է վերաբերվել արդար և անկողմնակալ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . « **Ալլահը չի արգելում**

ձեզ այն մարդկանց, ովքեր չեն կռվում ձեզ հետ կրոնի պատճառով և չեն արտաքսում ձեզ ձեր տներից, լինել առաքինի և արդար վերաբերվել նրանց : **Ճշմարիտ Ալլահը սիրում է նրանց, ովքեր արդար են գործում :»** (60:8 )

• Իսլամը հանդուրժող է ընդհանուր հասարակական խնդիրներում: Մարդ չպիտի լինի ամբարտավան մյուսի նկատմամբ հաշվի առնելով իր ցեղը կամ հասարակական կապերը : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . « **Օ, մարդկություն, ճշմարիտ Մենք ստեղծել ենք ձեզ տղամարդուց և կնոջից և արել ենք ձեզ ազգեր և ցեղեր, որ դուք ճանաչեք միմյանց : Ճշմարիտ ձեզանից ամենաառաքինին Ալլահի աչքին, ամենավեհն է : Ճշմարիտ Ալլահը Ամենագիտակն և Ամենաճանաչողն է :»** (49:13 )

• Իսլամը հանդուրժող է վարվելաձևում և էթիկայում: Նրա նպատակն է հաստատել մուսուլմանների մեջ բարձր չափանիշներ և սովորույթներ կապված էթիկայի և վարվելաձևի հետ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . « **Վերցրու ինչ տրված է անվճար, արա ինչ լավ է և ետ կանգնիր ամբարտավանությունից :»** ( 7:199)

Ամենաբարձրյալ Ալլահը նույնպես ասել է . « **Ով դիմանում է (հանուն Ալլահի) հանգստության և դժվարության և զսպում է բարկությունը և ով ներում է մարդկանց - և Ալլահը սիրում է լավություն անողներին :»** (3:134 )

Ամենաբարձրյալ Ալլահը նույնպես ասել է . « **Եվ հավասար չեն լավ և վատ արարքները : Փոխիր (չարիքը) այդ (արարքով), որը ավելի լավ է և նրա միջև ում մեջ կա թշնամություն (կդառնա) կարծես հավատարիմ ընկեր :»** (41:34 )

• Իսլամը հանդուրժող է երկրպագման գործողություններում : Ոչ ոք չափից դուրս ծանրաբեռնված չէ, և նրանք ովքեր ջանք են գործադրում երկրպագման մեջ կպարզևատրվեն մեծապես իրենց ջանքերի համար: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . « **Բայց նրանք ովքեր հավատացել են և անում են առաքինի արարքներ, Մենք չենք մեղադրում որևէ հոգի բացի իր կարողություններից : Նրանք Դրախտի ուղեկցորդներ են, նրանք կբնակվեն այնտեղ հավերժ :»** (7:42 )

• Իսլամը հանդուրժող է տնտեսական հարցերի առումով: Բոլոր տեսակները, որոնք կարող են ճնշել գումարի տեսանկյունից արգելված են : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . « **Նրանք, ովքեր ենթադրում են հետաքրքրություն (շահույթ) չեն կարող կանգնել (Դատաստանի օրը) բացի ինչպես մեկը կանգնում է, ով ծեծված է Սատանայի կողմից իր խելացնորությամբ: Դա այն պատճառով է, որ նրանք ասում են . « Առևտուրը ինչպես շահույթ է : » Բայց Ալլահը թույլատրել է առևտուրը և արգելել է տոկոսը : Այսպիսով, ով ընդունել է հորդոր Իր Տիրոջից և**

դադարեցնում է , կարող է ունենալ ինչ անցած է և նրա գործերը հանգստանում են Ալլահի հետ : Բայց նա , ով վերադառնում է առ (տոկոսը և շահը), նրանք Կրակի գործընկերներ են , նրանք կմնան այնտեղ հավերժ : »(2.275)

• Իսլամը հանդուրժող է կրթության և ուսուցման հարցերում : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասել է . « **Տուր ավետիս և մի բարդացրու ամենը** » (Իբն Հիբան)

• Իսլամի տեքստային ուղերձն է ժամանակ և ժամանակ կրկին , հաստատել հանդուրժողականության մեթոդաբանությունը դնելով այն գործնականի մեջ : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է . « **Հանդուրժողականություն և այն չունի բան բացի այն , ինչ կգեղեցկացնի նրան և այն չի տեղաշարժվի որևէ բան , բացի այն , որ թերություն կլինի դրան** :»(Մուսլիմ)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է . « **Օ, Ալլահ , ով գերադասում է իրեն իմ Ումմայից (ազգից) և դժվարացնում են այն ուրիշների համար , դարձրու նրանց կյանքը դժվար : Եվ ով հեշտացնում է ամեն ինչ ուրիշների համար , հեշտացրու ամեն բան նրանց համար** :» (Մուսլիմ)

Ով հանդուրժող է կպարզկատրվի և կօրհնվի մտնելով Դրախտ և կստանա պաշտպանություն Դժոխքի կրակներից : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասել է . « **Ով հեշտ հանդուրժող է , բարեսիրտ և Ալլահին մոտիկ , նրան կարգելվի մտնել Դժոխք** :» (Աթ-Թարգիբ ուաթ Թարհիբ)

Պետք է հայտնի լինի, որ երբ մենք խոսում ենք Իսլամի մասին կապված տարբեր իրավիճակների հետ , մենք ի նկատի չունենք , որ կարող ենք դիտավորյալ խախտել պատվիրանները և սպասենք նրբության և հանդուրժողականության :

Աիշան (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. «**Մարգարեյին չէր տրվում ընտրություն երկու դեպքերում , բացի այն դեպքից , երբ նա ընտրում է երկուսից ամենահեշտը , բացի , եթե դա մեղավոր գործողություն է , դրանից Նա իրեն հեռու կպահեր** :»(Մուսլիմ) Դրանից ազատվելը կլինի ծանր կարիքի պայմաններ :

## ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՏՔՈՒՄ

Հավատքը Իսլամում հիմնական տեսանկյունն է : Դա այնպիսի մի բան է առանց որի հնարավոր չէ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . «

Ճշմարիտ , Ալլահը չի ներում զուգորդում Իր հետ , բայց Նա ներում է ինչ ավելի քիչ է քան այդ , նրան , ում Նա է ցանկանում : Եվ նա , ով զուգորդել է ուրիշներ Ալլահի հետ , իրոք կատարում է հսկայական մեղք :»(4:48)

## ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄԻ ՀԱՎԱՏՔՈՒՄ

Դա պարզ հավատք է առանց դժվարությունների հասկանալու այն :

• Իսլամի բոլոր հետևորդները պարտավոր են ընդունել և հավատալ , որ Ալլահի բոլոր մարգարեները և առաքյալները ուղարկվել են Աստծո միակը լինելու հավատքի ուղերձով : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . « Մարգարեն հավատում է այն բանին , ինչ լուսաբանվել էր նրան իր Տիրոջից , և ( այնպես էլ ) հավատացյալները : Նրանք բոլորը հավատում են Ալլահին և Նրա հրեշտակներին , Նրա Գրքերին և Նրա մարգարեներին (ասելով) «Մենք տարբերություն չենք դնում Նրա ամեն մարգարեների մեջ :» Եվ նրանք ասում են , « Մենք լսում և մենք ենթարկվում ենք : {Մենք փնտրում ենք } Քո թողությունը , մեր Տեր եվ Քոնն է {վերջնական} նշանակման վայրը : »»(2:285)

• Ոչ ոք պարտադրված չէ առ Իսլամ : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է

« Չպիտի լինի որևէ պարտադրում կրոնի ընդունման մեջ : Ճիշտ ուղությունը պարզ է սխալ ուղղուց : Այսպիսով , ով չի հավատում Թագութին և հավատում է Ալլահին , բռնել է ամենահավատարիմ ձեռքը առանց կորուստի նրա մեջ : Եվ Ալլահը Լսող և Իմացող է : » (2:256)

Ոչ ոք չունի իրավունք պարտադրելու որևէ մեկին գալ առ Իսլամ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

« Եվ եթե ձեր Տերը ցանկանար , բոլորը երկրի վրա կհավատային , բոլոր նրանք ամբողջությամբ : Այնուհետ (Օ, Մուհամեդ), արդյո՞ք դու կպարտադրեիր մարդկանց , որպեսզի նրանք դառնան հավատացյալներ :»(10:99)

Ում Իսլամի ուղերձը հասել է և ում այն պարզաբանվել է , նա ունի ընտրություն կամ ընդունել , կամ մերժել Ուղերձը : Ամենակարող Ալլահը ասում է .

« Եվ ասա , « Ճիշտը քո Տիրոջից է , այսպիսով , ով ցանկանում է , թող հավատա և ով ցանկանում է , թող չհավատա : » Ճշմարիտ , Մենք պատրաստել ենք սխալվողների համար կրակ , որի պատերը կշրջապատեն նրանց : Եվ եթե նրանք կանչեն օգնության , նրանց կտրվի ջուր ինչպես թթվածնային յուղ , որը կխաշի (նրանց) դեմքերը : Խղձուկ է ըմպելիքը և չարիքը հանգստանալու վայրն է : » (18:29)

Այս հանդուրժողականության մեկ այլ գործոն է այն , որ մարդը դատվում է Ալլահի կողմից ըստ իր արարքների : Անձը չպետք է նայի իր արարքների իմաստի ներքինը և դատի ըստ դրա : Ժամանակին այս անհնար էր վերձանել , այսպիսով , ինչպես մուսուլման մեզ հրամայված է Ալլահից դատել ուրիշներին հիմնվելով մեր իսկ վկայություններին :

Ինչպես նշեցինք , անձին դատում են ըստ իր արարքի և ինչ ակնհայտ է այդ գործողություններից : Այս է վկայում նաև հետևյալ պատմությունը . « Ալի իբն Աբի Թալիբը ուղարկեց Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) ոսկու կտոր դեռ դուրս չբերած իր հանքաքարից , կաշվե պահոցով : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բաժանեց դրանք չորս մարդկանց միջև , ովքեր էին .Ուեյնա իբն Բադրը , Աքրա իբն Հաբիբը , Ջեյդ Ալ-Խեյլը և չորրորդը Ալքամա կամ Ամիր իբն Աթ Թուֆեյլը : Այդ առիթով նրա հետևորդներից մեկը ասաց. « Մենք ավելի արժանի ենք այդ (ոսկուն) քան այդ մարդիկ » :

Երբ լուրը հասավ Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն), նա ասաց , « Դուք ինձ չե՞ք վստահում ինչպես ես մեկն եմ , ով ստանում է Աստվածային Լուսաբանումը Աստծոց » : Այստեղ մի մարդ , խոր աչքերով , դուրս պրծած այտուկներով , բարձր ճակատով և թավ մորուքով , սափրած գլխով , ոտքի կանգնեց և ասաց . « Օ , Ալլահի Մարգարե , Վախեցիր Ալլահից : » Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց . « **Դժբախտությունն քեզ , մի թե ես աշխարհի ամենաաստվածավախ անձը չեմ :** » Հետո այդ մարդը հեռացավ : Խալեդ իբն Ուալիդը ասաց . « Օ , Ալլահի Մարգարե , սպանե՞մ նրան : » Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց . « **Ոչ , միգուցե նա աղոթում է :** » Խալիդը ասաց . « Շատ են նրանք , ովքեր աղոթում են և ասում են իրենց բերանով ինչ չկա նրանց սրտում : » Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց . « **Ինձ Ալլահը չի հրամայել փնտրել մարդկանց սրտերը կամ կտրել նրանց որովայները :** » Հետո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նայեց նրան , մինչ նա հեռանում էր և ասաց . « Նրանից կգա սերունդների մի խումբ ովքեր կկարդան Ղուրան անդադար և նրբորեն , բայց այն չի իջնի նրանց կոկորդներից ներքև (նրանք ոչ կհասկանան , ոչ կգործեն այդպես) : Նրանք կգնան կրոնից դուրս (Իսլամից) , ինչպես նետն է դուրս գալիս աղեղից : »

• Երբ մարդը այնպիսի իրավիճակում է , որը սպառնում է վնասել նրան , ապա այս դեպքում նա կարող է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր

պաշտպանելու իրեն : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. « **Ով դառնում է անհավատ Ալլահին իր հավատքից հետո , բացի այն դեպքերից երբ պարտադրված է , {ետ կանգնել իր կրոնից} մինչ նրա սիրտը ապահով է հավատքով : Բայց նրանք , ովքեր {կամովի} բացում են իրենց սրտերը անհավատության , նրանց վրա է Ալլահի բարկությունը և նրանց համար է մեծ պատիժ :» (16:106)**

• Ամմար իբն Յասիրը , հետևորդներից մեկը , մահվան և կյանքի իրավիճակում էր , երբ նրան համարյա սպանում էին ոչ մուսուլմանները տանջելով : Նրան տանջողները ասեցին վատաբանել Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) , որպեսզի փրկի իրեն հետագա տանջանքներից , այսպիսով նա արեց այդ : Նա շատ տխրել էր այդ արարքի համար , Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մխիթարեց նրան և ասաց. « **Ինչպե՞ս է քո հավատքը** », նա ասաց. « Ես լցված եմ Իսլամով :» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « **Եթե նրանք ցանկանան տանջել քեզ կրկին , ասա ինչ պետք է ասես :**» (Իբն Քաթիր)

• Իսլամը նույնպես ազատել է մարդկությանը ծառայելու ուրիշ մարդկանց և հանձնարարել է երկրպագել միայն Աստծոն : Ամենակարող Ալլահը ասում է .

« **Բայց նրանք վերցրել են բացի Նրանից աստվածներ , որոնք ոչինչ չեն ստեղծում , մինչ նրանք ստեղծվել են և չունեն իշխանություն իրենց վնասելու կամ օգուտ տալու և չունեն իշխանություն մահվան կամ կյանքի կամ հարության :**» (16:20) Ամենաբարձրյալ Ալլահն ասում է .

« **Եվ եթե Ալլահը տալիս է ձեզ ձախորդություն , չկա ուրիշ հեռացնող այն բացի Նրանից , և եթե Նա մտադրվել է քեզ տալ բարիք , ապա ոչ ոք չի կարող ետ մղել նրա առատաձեռնությունը : Նա հասցնում է այդ Իր ծառաներից , ում որ Նա է ցանկանում : Եվ Նա Ներող և Գթասիրտն է :**» (10:107)

Խուսափել սին ակնածանքից առ ցանկացած անհատ , Ալլահը պարզաբանում է , որ Մարգարե Մուհամեդը պարզապես մարդ էր , ինչպես բոլոր մարգարեները նրանից առաջ : Նրանք պարզապես մարդիկ էին , ովքեր արժանի չէին մեծարման : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

« **Ասա , « Ես ինքս իշխանություն չունեմ օգուտ տալու կամ վնասելու , պաշտպանելու ինչպես Աստվածն է ցանկանում : Եթե ես իմանային անտեսանելին , ես կքողարկեյի ինձ բարիքի առատությամբ և ոչ մի վնաս չէր գա ինձ : Ես զգուշացնող և լավ նորությունների կրող եմ նրանց համար , ովքեր կհավատան :»» (7:188)**

• Ալլահը նույնպես հրամայել է մուսուլմաններին լինել արդար և ճշմարիտ բոլոր մարդկանց նկատմամբ , անկախ նրանց հավատքի կամ

կրոնի , մաշկի գույնի կամ էթնիկ ծագման , կամ սոցիալական դիրքի : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

« **Աստված հրամայում է արդարություն , բարություն և տալ իրենց իրավունքները մոտիկ բարեկամներին , և Նա արգելում է բոլոր ամոթալի արարքները և անարդարությունը և ճնշումը : Նա խրատում է ձեզ , այնպես որ դուք ընկալեք զգուշացումը :»(16:90)**

• Մարդ պետք է արդար լինի ուրախության և տխրության իրավիճակներում , և մուսուլմանների և ոչ մուսուլմանների հետ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

« **Օ , դուք , ովքեր հավատացել եք , եղեք հաստատուն կանգուն Ալլահի համար , վկայեք արդարության , և մի թույլ տվեք մարդկանց ատելությունը խոչընդոտելու , լինել արդար : Եղիր արդար , այն մոտ է առաքինության : Եվ վախեցիր Ալլահից , իրոք Ալլահը ծանոթ է նրան , ինչ դու անում ես : » (4:135)**

• Իսլամական հավատքի հանդուրժողական տեսանկյուն է , որ մուսուլմանը հավատում է , որ բոլոր մարդիկ Աստծոց բարեհաճություն են ստացել : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Եվ Մենք իրոք պատվել ենք Ադամի երեխաներին և տարել ենք նրանց ցամաք և ծով և ապահովել ենք նրանց լավ բաներ և գերադասել ենք նրանց ամենից վեր , ինչ ստեղծել ենք , որոշակի գերադասությամբ : »(17:70)**

Ջաֆիրն ասաց , որ հրեայի հուղարկավորություն էր անցնում և մարգարեն (Իս.Ա.Ո.Ն) կանգնեց նրա համար , նույնպես և Ջաֆիրը : Հետո Ջեֆիրն ասաց , « Օ , Ալլահի Մարգարե , դա հրեայի մարմին էր : » Նա ասաց . « **Ոտքի կանգնիր նրա համար (հարգանքի նշան) : »(Բուխարի)**

## **ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄՈՒՄ ՇԱՐԻԱԹԻ ՀԵ ԿԱՊԱԿՑՎԱԾ**

Այժմ «Շարիաթ» տերմինը ներառում է վախի աստիճան , տալիս է տանջանքի նկարագիր և ուրիշ հասարակական պատիժի պատկեր մարդկանց մտքերում : Իրականում , Շարիաթը պարզապես արտահայտում է աստվածային օրենքների համակարգ , որը տրված է մարդկությանը : Այն մի համակարգ է , որը հիմնված է հանդուրժողականության և հանգստության վրա : Ահա մի քանի կետեր մտապահելու համար .

• Ղուրանի և Սուննայի տեքստային ուղերձները շատ հեշտ է հասկանալ: Ամենաբանձկյալ Ալլահը ասաց.

**« Մենք հեշտացրել ենք սովորել դասեր Ղուրանից: Կա՞ մեկը ով կստանա հանդիմանություն :»(54:17)**

Տեքստային ուղերձը շատ պարզ է իր իմաստով, չկա դժվարություն հասկանալու ինչ է այն ասում: Եթե կա իրավիճակ որտեղ մարդ կասկածում է. Աստված ուղղորդում է մեզ հարցնելու նրանց, ով ունի գիտելիք :

**« Այսպիսով, հարցրու ուղերձի մարդկանց , եթե դու չգիտես :»(16:43)**

Մա իրոք կարևոր գործոն է: Եթե մարդ անտեղյակ է աշխարհիկ հարցերին, նա կարող է հարցնել մասնագետին լուծելու իրավիճակը: Նույնն է վերաբերվում կրոնական հարցերին: Աստված սահմանել է, որ առանց գիտելիքի խոսելը մեծ մեղք է: Ով խոսում է կրոնի մասին առանց գիտելիքների և հետո արգելում է օրինական հարցը կամ անում է հակառակը, մեծ մեղք է գործում:

Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. **« Ասա, « Իմ Տերը արգելել է միայն անբարոյականությունները , ինչ ակնհայտ է նրանցից և ինչ թաքնված է, և մեղք ու ճնշում առանց իրավունքի և որ դու զուգակցում ես Ալլահի հետ , որի համար չունես իշխանություն և որ ասում ես Ալլահի մասին ինչ չգիտես : »»(7 :33)**

Ալլահի Մարգարեն պարզաբանում է բացասական ազդեցությունը այն մարդու, ով անգիտակ խոսում է գիտության մասին: Նա անկասկած սխալ ուղղու կղնի իրեն և ուրիշներին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է. **« Աստված չի հեռացրել գիտելիքը իր ստրուկներից, պատճառ դառնալով որ նրանք մոռանան, այլ դեպքում գիտելիքը կկորի գիտնականների կորստով: Մինչ, չի մնա ոչ մի գիտնական, մարդիկ կղնեն իրենց վրա անտեղյակ անհատներ, և նրանք կարձակեն վճիռներ առանց գիտելիքների և սխալ ուղղու կղնեն իրենց և ուրիշներին : » (Բուխարի)**

Իսլամում չկա առեղծվածային կամ անբացատրելի հարցեր: Երբեմն լինում են խնդիրներ որոնց մասին մենք չունենք ամբողջական ըմբռնում, իրականում նրանք չեն ազդում մարդու ոչ հավատքի վրա, ոչ էլ տալիս են որևէ առավելություն: Այսպիսի մի խնդիր է, ինչպես Աստված ասում է. **«Եվ նրանք հարցնում են քեզ (Օ, Մուհամեդ), հոգու մասին: Ասա, « Հոգին իմ Տիրոջ գործերից է: Եվ մարդկությանը չի տրված գիտելիք բացի մի փոքր :»»(17 :85)**

Ամենաբարձրյալ Ալլահը նույնպես ասել է. **« Նրանք հարցրեցին քեզ (Օ, Մուհամեդ), Ժամի մասին, ե՞րբ այն սահմանված: Ասա, « Այս գիտելիքը միայն իմ Տիրոջ հետ է: Ոչ ոք չի լուսաբանի ժամանակը բացի Նրանից:**



Այն ընկած է երկնքի և երկրի միջև : Այն չի գա ձեզ բացի անսպասելի ձևով : » Նրանք հարցնում են քեզ կարծես քեզ ծանոթ է այդ : Ասա, « Այդ գիտելիքը միայն Ալլահի հետ է , բայց մարդկանց մեծամասնությունը չգիտեն : » (47 : 18)

Ամենը ինչ մեզ առավելություն կտա գիտելիքի առումով , և որը կապված է անտեսանելիի հետ , բացատրված է մեզ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կողմից : Այն ներառում է Դրախտի և Դժոխքի նկարագրությունը , նախորդ ազգերի նկարագրությունը , այնպես , որ մենք կարողանանք անբախտանք այն ամենին , ինչ կատարվել է նրանց հետ : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է .

« Այսպիսով ես զգուշացրել եմ ձեզ Կրակի մասին , որը բոցավառվում է : Ոչ ոք չի (մտնի) այնտեղ այրվելու , բացի ամենախղճուկից : Ով մերժել է և հեռացել է : Բայց առաքինին կխուսափի այն ,( Նա ) , ով տալիս է իր հարստությունից մաքրագարդելու իրեն : Եվ չի (տալիս) մեկի համար , ով արել է լավություն պարգևատրվելու : Բայց միայն փնտրում է իր Տիրոջ շուրջ , Ամենաբարձրյալի : Եվ նա կլինի բավարարված : » (92:14-21)

• Չնմանվելով մարդու կողմից ստեղծված օրենքներին , որոնք կարող են հարմար լինել մեկին և անհարմար մյուսին , կապված որոշ բացթողումների հետ , Իսլամի օրենքները աստվածային են : Աստծո օրենքը վերջնական և որոշակի է , և օրենք է որին բոլորը կդիմեն , լինեն նրանք հարուստ կամ աղքատ , պատվելի կամ ոչ : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց . « Հավատացյալ տղամարդու և կնոջ համար չէ , երբ Ալլահը և նրա Մարգարեն որոշում են որևէ բան , որ նրանք հետո ունենան որևէ ընտրություն նրանց գործում : Եվ ով չենթարկվի Ալլահին և նրա Մարգարեյին , իրապես շեղվել է դեպի պարզ սխալ : » (33:36)

Ալլահը կարգադրել է , որ բոլորը պիտի հարգեն և պահպանեն օրենքի համակարգը : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է , « Միակ վիճակն է (ճշմարիտ) հավատացյալի , երբ նրանց կանչում են առ Ալլահ և Նրա Մարգարեն դատելու նրանց միջև , այն է որ նրանք ասում են , « Մենք լսում ենք և մենք ենթարկվում ենք : » Եվ նրանք հաջողակներն են : » (24:51)

Իսլամում ոչ ոք չունի բացարձակ իշխանություն , ներառյալ նահանգի կառավարիչը , նա օրենքի ենթական է , ինչպես որևէ մեկ ուրիշը կլինի նրանց ենթական : Սա է Իսլամի հանդուրժողականությունը և գեղեցկությունը : Ոչ ոք չի կարող ճնշել այս կանոնները և սահմանները : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց . « Մուսուլմանը պիտի լսի և ենթարկվի , բացի այն դեպքերից , երբ նրան հրամայված է մեղսակից արարք , այս դեպքում չկա ենթարկվածություն : » (Բուխարի)

• Աստծո օրենքների մեկ այլ գործոն է, որ նրանք փոփոխման ենթակա չեն և ժամանակից դուրս չեն գալիս : Այս օրենքները կատարյալ են բոլոր ժամանակների և վայրերի համար : Այդպիսին չեն մարդու կողմից ստեղծված օրենքները, նրանք ենթակա են փոփոխման և դառնում են ժամանակից դուրս : Աստված հրամանագրել է օրենքի աստվածային համակարգը և այն չի փոխվում : Ամենաբարձրյալ Աստվածն ասում է . « **Արդո՞ք նրանք ցանկանում են անտեղյակության դատաստան : Բայց ով է ավելի լավ քան Ալլահը դատաստանում մարդկանց համար , ովքեր հաստատուն են {հավատքում} :** »(5 :50)

• Իսլամում չկա հոգևորականության կառուցվածք , ոչ էլ նրանք համարվում են մարդիկ , ում կարծիքները Աստծո խոսքից առավել են : Ալլահն ասում է .« **Անկասկած , Ալլահին է մաքուր կրոնը : Եվ նրանք , ովքեր վերցնում են պաշտպաններ բացի Նրանից ասա , « Մենք միայն պաշտում ենք նրանց , որ նրանք կարող են բերել մեզ ավելի մոտ Ալլահին դրությամբ :** »» (39:3)

Ոչ ոք չունի իշխանություն վնասելու կամ շահ տալու : Սա պատկանում է միայն Ալլահին : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Իրոք նրանց դուք ( բազմաստվածներ ) կոչում եք բացի Ալլահից , ձեզ նման ծառաներ են : Այսպիսով կոչիր նրանց և թող նրանք պատասխանեն ձեզ , եթե դուք ճշմարիտ եք :** » (7:194)

• Իսլամը շեշտում է , որ ամեն անհատ ունի ուղղակի կապ Աստծո հետ , չկա միջանկյալություն մեր և Նրա միջև : Նա ներում է մեր մեղքերը և շնորհում է մեզ ինչ մենք ցանկանում ենք : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Եվ ով արել է սխալ կամ սխալներ , բայց հետո փնտրում է Ալլահի ներումը , կգտնի Ալլահին Ներող և Գթասիրտ :** » (4:110) Ամենաբարձրյալ Ալլահն նույնպես ասում է . « **Եվ քո Տերը ասում է , « Կանչիր Ինձ , Ես կպատասխանեմ քեզ :** »» (40:60)

• Իսլամում չկա կրոնական հեղինակություններ , որոնք կարող են օրինականացնել ինչ անօրինական է կամ անօրինականացնել ինչ օրինական է , քազի օրենք ստեղծելը պատկանում է միայն Աստծոն : Հայտնի փաստ է , որ նախորդ ազգերի մեջ օրենքը հաճախ փոփոխվում էր համապատասխանեցնելով իշխանավորների կարիքներին : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է այս մասին . « **Նրանք դարձրել են իրենց գիտնականներին և վանականներին ինչպես տերեր բացի Ալլահից :**»(9:31) Երբ նրանց ռաբիները և վանականները օրինականացնում են որևէ բան , որը անօրինական էր կամ անում են հակառակը , նրանց մարդիկ հետևում են : Սա է երկրպագությունը :

• Իսլամի հանդուրժողականության մեկ ուրիշ գերծոն է նաև Շուրա համակարգը, որը նշանակում է ընդհանուր քննարկում: Այս օգտագործվում է այն դեպքերում, երբ կա հասարակական օգտի խնդիր, որի ժամանակ գիտնականները և այդ բնագավառի գիտականները խորհրդակցում են, որպեսզի ունենան գործողության լավագույն ուղղություն: Ալլահն ասում է, «**Այսպիսով Ալլահի գթասրտությամբ (Օ, Մուհամեդ), դու մեղմ էիր նրանց հետ: Եվ եթե դու լինեիր կոպիտ (ճառի ժամանակ) և կոպիտ սրտի մեջ, նրանք կլուծարվեին քեզանից: Այսպիսով ներիր նրանց և խնդիր թողություն նրանց համար և խորհրդակցիր նրանց հետ հարցում: Եվ եթե դու որոշել ես, ապա վստահիր Ալլահին: Ճշմարիտ, Ալլահն սիրում է նրանց, ովքեր վստահում են (Նրան):**»(3:159)

• Իսլամը ճանապարհ է բացել Իջթիհադի համար, որը նշանակում է, երբ փորձաքննության գիտակը կգործադրի ջանք, հասնելու կանոնի որոշակի հարցում, որը նշված չէ Աստվածաշնչային Գրքում: Իսլամում ընդհանուր ուղղությունները տրված են և պետք է հետևել դրանց, երբ իրավիճակը պահանջում է: Այս դարձում է Իսլամի օրենքները բազմակողմանի և հարմար բոլոր ժամանակներին և վայրերին:

Աստված սահմանել է օրենքներ պաշտպանելու բոլոր համայնքները ծայրահեղություններից: Ամենաբարձրյալ Ալլահն ասում է. «**Ալլահը ենթադրում է ձեզ համար հանգստություն և չի ենթադրում դժվարություն:**» (2:185)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է. «**Զգուշացեք ծայրահեղությունից, քանի որ դա այն էր, ինչ կործանեց նախորդ ազգերին:**» (Նիսեե)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) քարոզում էր ժամանակակից կյանքի ուղղի: Անաս իբն Մալիքը ասում է, « Երեք մարդ եկան Մարգարեյի տուն հարցնելու, թե ինչպես է նա անց կացնում իր օրերը և ինչպես է նա երկրպագում Ալլահին: Երբ նրանց տեղեկացրեցին ինչ էր Մարգարեն անում, նրանք տեսան այն այնքան փոքր, այսպիսով նրանք ասեցին. « Ալլահը ներել է մարգարեյին, ովքե՞ր ենք մենք համեմատելու մեզ նրա հետ:» Մեկը ասաց. « Ինչ վերաբերվում է ինձ, ես կաղոթեմ անդադար գիշեր ու ցերեկ:» Երկրորդը ասաց, « Ես պահք կպահեմ մինչև կյանքիս վերջ: » Երրորդն ասաց. « Ինչ վերաբերվում է ինձ, ես չեմ ամուսնանա:» Մարգարեն եկավ որոշ ժամանակ անց և ասաց, արդյո՞ք նրանք են ասել այդպես ու այդպես: Նա ասաց. «**Ճշմարիտ, ես ձեր միջև ամենաաստվածավախն եմ և ես աղոթում եմ և հանգստանում եմ, պահք եմ պահում և դադարեցնում եմ պահքը և ամուսնանում եմ կանանց հետ: Ով չի ցանկանում պահպանել իմ ուղղին, ինձանից չէ:**»(Բուխարի)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ցուցադրեց ուղղություն իր հետևորդներին դեպի բարեկեցիկ կյանք, այնպես որ նրանք չընկնեն ծայրահեղության գիրկը: Հաղորդված է հաղիթ Աբդուլահ իբն Ամր իբն ալ- Սսից, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « **Ինձ տեղեկացրել են, որ դուք պահք եք պահում ամեն օր և աղոթում եք ամեն գիշեր(ամբողջ գիշեր):Պահք պահիր (մի քանի օր) և դադարեցրու (մի քանի օր), աղոթիր և քնիր, քանի որ քո աչքերը ունեն իրավունք քո վրա և քո մարմինը և քո ընտանիքը (կինը) ունեն իրավունք քո վրա:**» Ես պատասխանեցի, «Ես ունեմ ավելի շատ ուժ քան այդ, պահք պահելու ուրիշ օրեր:» Մարգարեն (խ.ա.ո.ն) ասաց. « **Այդ դեպքում պահք պահիր ինչպես Դավիթ Մարգարեն**»: Ես ասացի, «Ինչպե՞ս»: Նա պատասխանեց. « **Նա սովորություն ուներ պահք պահել կենտ օրերին:**» Մարգարեն ( Խ.Ա.Ո.Ն ) ասաց. « **Նա, ով պահք է պահում ամեն օր ամբողջ կյանքի ընթացքում, կարծես մեկն է, ով պահք չի պահել ընդհանրապես:**»»

Մա չի նշանակում, որ Իսլամը խրախուսում է մարդուն փնտրել կյանքի հաճույքներ, անտեսելով Հաջորդ Կյանքը: Հակառակը, Իսլամը հավասարակշռված կյանքի ձև է: Այն տալիս է հոյակապ հավասարակշռություն այս և հաջորդ կյանքի միջև: Ամենաբարձրյալ Ալլահն ասում է. « **Օ, դուք, ովքեր հավատացել եք, երբ կանչում է ( ազանը) աղոթքի Չուճա (Ուրբաթ) օրը, ապա շարունակիր հիշատակել Ալլահին և թող առևտուրը: Մա ավելի լավ է քեզ համար, եթե միայն իմանայիք:** »(62:9)

Աշխարհիկ կյանքի հորձանուտում, Ալլահը հրամայել է, որ մարդ չմոռանա իր կարիքների պահպանությունը: Նա, Ամենաբարձրյալը ասաց. « **Եվ երբ աղոթքը ավարտվում է, ցրվեք երկրով մեկ և փնտրեք Ալլահի բարեհաճությունը և Հիշեք Ալլահին հաճախ, որ հաջողակ լինեք:** »(62:10)

Ալլահը նույնպես հրամայել է մեզ խուսափել անիմաստ ծախսերից: Նա, Ամենաբարձրյալը ասում է, « **Օ, Ադամի երեխաներ, հագնվեք պատշաճ երբ դուք երկրպագման մեջ եք, և կերեք և խմեք բայց մի եղեք սին վատնողներ, Աստված չի սիրում անօգուտ վատնող մարդկանց:**»(7:31)

Իսլամի հանդուրժողականության մեկ այլ նշան է, երբ մարդ վախենում է իր գոյության համար, կամ որ վնաս կպատահի իրեն, այս դեպքում օրինական է նրա համար սպառել, ինչ արգելված էր, որպեսզի կարողանա պահպանել իրեն և մնալ կենդանի: Ամենաբարձրյալ Ալլահն ասում է, « **Նա միայն արգելել է ձեզ մահացած կենդանիներ, արյուն, խոզի միս և այն ինչ նվիրված է ուրիշին բացի Ալլահից: Բայց, ով ստիպված է (անհրաժեշտության դեպքում), կամ ցանկության, կամ ճնշման (դեպքում), չկա մեղք նրա վրա: Ճշմարիտ Ալլահը Ներող և Գթասիրտ է:**»(2:173)

Սայիդ Քութուբը , թող Ալլահը գոհանա նրանով , ասաց իր բացատրությունում , « **Դրանք օրենքների և հավատալիքների խումբ են , որոնք շեշտում են մարդուն ինչպես մարդ և ոչ թե կենդանի , կամ հրեշտակ կամ սատանա : Հաշվի է առնվում մարդու ունակությունները , ամբողջական հնարավորությունները և մարդկային թուլությունները :»**

Իսլամի հանդուրժողականության մեկ այլ նշան է , երբ մարդու լավ արարքները կկրկնապատկվում են բազմաթիվ անգամ : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է . « **Ով գալիս է (Դատաստանի Օրը) լավ գործերով կունենա տասնապատիկ ավել դրանից (իր հաշվին) և նա , ով գալիս է վատ արարքներով , չի կոմպենսացվի , բացի նույնից դրա նման և նրանք չեն սխալվի :»(6:160)**

## **ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՎԱՅԻ ( ԿՈՉՈՒՄ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԱՌ ԻՍԼԱՄ ) ՊԱՐԱԳԱՅՈՒՄ**

Իսլամը աշխարհի հավատք է և այն բոլոր ժամանակների և վայրերի մարդկանց համար է : Ըստ դրա մարդկանց կոչելու առ Իսլամ և պրոպագանդելու այն , պիտի լինի էթիկայի կանոններին համապատասխան և լավ ձևով , այնպես որ ընդունողը մտածի նրա մասին անաչառ ձևով : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Հրավիրիր քո Տիրոջ ճանապարհ իմաստությամբ և լավ ուսուցմամբ և վիճիր նրանց հետ այնպիսի ձևով , որը լավագույնն է : Ճշմարիտ քո Տերը լավագույն գիտակն է , ով մոլորվել է Նրա ուղղուց , և Նա ամենալավ գիտակն է , թե ով է (ճիշտ) ուղղորդված :**»(16:125)

Եկեք քննարկենք հանդուրժողականության գարծոններ , երբ հարցը վերաբերվում է Իսլամի պրոպագանդային :

Մենք ընդունում ենք բոլոր մյուս հավատքների մարդկանց : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն )ասում է . « **Ալլահն ավելի գոհ է իր ստրուկի զոջումից , քան այն մարդը , ով ճամբար է դրել մի վայրում , որտեղ նրա կյանքը վտանգի տակ է , բայց նա հեծնում է իր զագանին , կրելով իր ուտելիքը և ջուրը : Նա հետո , հանգստանում է և քնում է մի փոքր և արթնանում է և**

գտնում է իր վայրի գազանը գնացած : ( Նա սկսում է փնտրել նրան ) և տառապում է դաժան տապից և ծարավից , կամ ինչից որ Ալլահն է ցանկանում : Նա հետո ասում է «Ես կգնամ ետ իմ վայրը :» Նա վերադառնում է և քնում է կրկին և հետո ( արթնանալով ) , բարձրացնում է իր գլուխը և գտնում է իր վայրի գազանին կանգնած իր կողքը : »(Մուսլիմ)

Իսլամի հանդուրժողականության մեկ այլ գործոն է նաև , այն , որ երբ մարդ կոչում է մյուսին առ Իսլամ , ապա պետք է անի այդ լավ և հրավիրող ձևով : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) ասում է . « **Տուր ուրախ լուրեր և մի մղիր մարդկանց հեռու , հարցերը դարձրու հեշտ և մի դժվարացրու :** »(Մուսլիմ)

Մենք պետք է քննարկենք ամեն ինչ հարգալից այն մարդկանց հետ , ովքեր ունեն հակառակ կարծիք : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Եվ մի վիճիր Գրեթի Մարդկանց հետ բացի լավագույն ձևով , նաև բացի նրանցից , ովքեր անարդար են նրանցից և ասա , « Մենք հավատում ենք նրան ինչ լուսաբանվել է մեզ և լուսաբանվել է ձեզ : Եվ մեր Աստվածը և ձեր Աստվածը մեկն է , և մենք Մուսուլմաններ ենք ( ենթարկվում ենք ) Նրան »** : »(29:46)

Ոչ ոք չի կարող ստիպել մյուսին ընդունել կարծիք , ոչ էլ կարող է մեկը համոզել մյուսին ստիպողաբար : Եկեք դիտենք Ալ-Ասա իբն Ուայլի պատմությունը : Նա բազմաստված էր , ով մերժում էր ընդունել Իսլամի հավատքը : Նա գնաց Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ քայքայված ոսկորով , և նա փշրեց այն և ասաց Մարգարեյին « **Արդյո՞ք դու հայտարարում ես , որ մենք հարություն կառնենք այս բանի վերածվելուց հետո :** » Նա պատասխանեց . « **Այո , Ալլահը քեզ մահ կտա , հետո հարություն կտա և հետո կդնի քեզ Դժոխքի կրակները :** » Հետո նա արտաբերեց Աստծո խոսքերը . « **Եվ նա ներկայացրեց մեզ օրինակ և մոռացավ ( իր ) իսկ ստեղծած արարածներին :** Նա ասում է , « **Ո՞վ կտա կյանք ոսկորներին մինչ նրանք փոշիացած են :** » Ասա , « **Նա կտա կյանք , ով ստեղծել է նրանց առաջին անգամ , և Նա է , բոլոր արարածների Իմացողը :** » (Դա) Նա է , ով կանաչ ծառից պատրաստել է կրակ և հետո դրանից դուր բոց : Այդ Նա՞ չէ արդյոք , ով ստեղծել է երկինք և երկիր , և Ի Վիճակի Չէ՞ ստեղծել դրան նման բաներ : Այո , (այդ այդպես է ,) և Նա Իմացող Արարիչ է : Նրա հրամանն է միայն , երբ Նա մտադրված է որևէ բան , ասել « Եղիր » և այն լինում է : Այսպիսով բարձրյալ է Նա , ում ձեռքերում է ամեն ինչի թագավորությունը և Նրան դու կվերադառնաս : » (36:78-83)

Այս բնույթի վեճերը դարձնում են անհնար հերքել ճշմարտությունը : Մեկ այլ օրինակ է Թագավոր Նամրուդի և Իբրահիմ (Աբրահիմ ) Մարգարեյի քննարկումը , որը նշված է Ղուրանում : Ամենակարող Ալլահն ասում է . « Դուք հաշվի չեք՝ առնում մեկին , ով (պարզ )վիճում է Աբրահամի հետ իր Տիրոջ մասին , որովհետև Ալլահը տվել է նրան թագավորություն : Երբ Աբրահամը ասաց . « Իմ Տերը մեկն է , ով տալիս է կյանք և պատճառում է մահ , » նա ասաց . « Ես տալիս եմ կյանք և և պատճառում եմ մահ : » **Աբրահամն ասաց . « Իրոք , Ալլահի հրամանով արևը ծագում է արևելքից , այնպես որ բեր այն արևմուտքից : » Այսպիսով անհավատները ( զարմանքից ) ճնշված էին և Ալլահը չի առաջնորդում սխալվող մարդկանց : » (2:258)**

Իսլամի հանդուրժողականության ևս մի գործոն է այն , որ մարդ չպետք է վրդովեցնի մարդկանց , տարածի ատելություն կամ պատճառ դառնա իրարանցման : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Եվ ասեք Իմ ծառաներ ասել , ինչ լավագույնն է : Իրոք , Սատանան դրդում է (կրիվ) նրանց միջև : Իրոք Սատանան հավերժ է մարդկության համար և ակնհայտ թշնամի : » (17:53)**

Մենք օգտագործում ենք մեթոդ , որպեսզի մարդկանց նկարագրենք Իսլամը այնպես , որ նրանք սիրեն այն : Ալլահն ասում է , « **Օ , Գրերի Մարդիկ , ինչու՞ եք դուք վիճում Աբրահամի մասին , մինչ Թորան և Ավետարանը լուսաբանվել են նրանից հետո : Այդ դեպքում դու պատճառ չե՞ք : » (3:65)**

Մենք պետք է լինենք նուրբ , բարի և ընդունող : Ալլահն ասում է . « **Գնացեք , երկուսդ էլ Փարավոնի մոտ : Իրոք նա ճնշել է : Եվ խոսիր նրա հետ մեղմ խոսքերով , այնպես որ միզուցե նա կհիշի կամ կվախենա (Ալլահից) : » (20:43-4)**

Մենք հաճախ խնդրում ենք այն մարդկանց , ովքեր ունեն տարբեր կարծիքներ , բերել փաստեր և օրինակներ : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Ասա , Օ , Մուհամեդ , դուք կոչու՞մ եք բացի Ալլահից : Տույց տուր ինձ ինչ են նրանք ստեղծել երկրի վրա , կամ նրանք ունե՞ն գուգրնկեր երկնքի ստեղծման գործում : Բեր ինձ գիր ( լուսաբանված ) սրանից առաջ կամ (մնացած ) որևէ հետք գիտելիքից , եթե լինեք ճշմարիտ : » (46:4)**

Մեզ ասված է քննարկել թեմաներ կառուցողական ձևով : Ամենակարող Ալլահն ասում է . « **Ասա , « Օ , Գրերի Մարդիկ , եկեք խոսքի , որը անաչառ է մեր և ձեր միջև- որ մենք չենք երկրպագի բացի Ալլահից և չենք հավասարեցնի որևէ բան Նրան և չենք վերցնի միմյանց ինչպես տերեր**

**Ալլահի փոխարեն :» Բայց եթե նրանք հեռանան , ապա ասա , « Վկայեք , որ մենք մուսուլմաններ ենք (ենթարկվում ենք Նրան) »»(3:64)**

Ով ընդունում է Իսլամ կղառնա մեղքերից զուրկ , որը կատարել է Իսլամից առաջ : Աստված չի հաշվի ոչ մի մեղք իր անցյալ կյանքից : Ամենաբարձրյալ Ալլահին ասում է . « **Ասա նրանց , ովքեր չեն հավատացել , ( որ ) , եթե նրանք դադարեն , ինչ մինչ այդ տեղի է ունեցել կներվի նրանց համար : Բայց , եթե նրանք վերադառնան ( թշնամության ) - ապա նախորդ ( ապստամբ ) մարդկանց նախադեպը տեղի կունենա :»(8:37)**

Ցանկացած մեկը , ով դառնում է մուսուլման , կստանա լավ բաների պարգևը , որը նա արել է անցյալում : Հաքիմ իբն Հիզամը ասաց . « Օ , Ալլահի մարգարե , ի՞նչ ես կարծում իմ գործած լավ արարքների մասին , որոնք ես սովորաբար արել եմ Իսլամ ընդունելուց առաջ , ինչպիսիք են լավ վերաբերմունքը հարազատների հետ , ստրուկների և այլն : Արդյո՞ք ես կստանամ պարգև դրանց համար :» Ալլահի Մարգարեն ասաց . « Դու ընդունել ես Իսլամ այն բոլոր լավ արարքներով , ինչ դու արել ես :»

Ով ընդունում է Իսլամ նախորդ կրոնից , կպարգևատրվի կրկնակի : Ամենաբարձրյալ Ալլահին ասում է . « **Նրանց կտրվի կրկնակի պարգև ,ինչի համար նրանք համբերատար հանդուրժել են և ( որովհետև ) նրանք փոխել են չարիքը բարիքի , և ինչ Մենք նախատեսել ենք , վերցրել են :»(28:54)**

## **ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Մինչ որևէ բան սկսելը , եկեք նշենք արևելագետ Յանգի խոսքերը . « Կան շատ բաներ , որը արևմուտքը պետք է սովորի Իսլամական Քաղաքակրթությունից , որոնցից մեկն է հանդուրժողականությունը :»

Բոլոր ֆինանսական գործարքները օրինական են ոչ մուսուլմանի և մուսուլմանի միջև , ինչպիսիք են տան և մեքենայի առք ու վաճառքը , ընկերություններին մասնակցելը , այնքան ժամանակ , մինչ բավարարվում են Իսլամական սկզբունքները : Աիշան , ( թող Ալլահը գոհանա նրանով ) , ասաց . « Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) գնեց ուտելիք Հրեա վաճառականից , և ի



վիճակի չէր վճարել գումարը կանխիկ , այսպիսով նա թողեց իր գրահը ինչպես գրավ , նրա հետ , մինչ նա կկարողանա վճարել »:

Փոխանակության միակ ձևը , որը անօրինական է , այն է , որը պարունակում է վնասի աստիճան : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Օ, դուք , ովքեր հավատացել եք , մի ենթադրիր օգուտ , կրկնակի կամ բազմակի , բայց վախեցիր Ալլահից , որ կարողանաս հաջողակ լինել :** » (3:130)

Ամենաբարձրյալ Ալլահն նաև ասել է .« **Օ, դուք , ովքեր հավատացել եք , իրոք թմրանյութերը , խաղամուլությունը , զոհաբերությունը զոհասեղաններին ուրիշներին բացի Ալլահից , գուշակությունը աղտ են , Սատանայի գործերից , այսպիսով խուսափիր դրանցից , որ հաջողակ լինես : Սատանան միայն ցանկանում է պատճառել ձեզ թշնամություն և ատելություն թմրանյութերի և խաղամուլության միջոցով , որ կանգնեցնի ձեզ Ալլահին հիշելուց և աղոթքից : Այսպիսով , դու չե՞ք դադարի » (5:90-91)**

Թույլատրելի է մուսուլմանին աղոթել ոչ մուսուլմանական երկրպագման վայրում : Աբու Մուսան աղոթեց Դամասկոսում գտնվող եկեղեցում :

Մուսուլմանի համար սա խրախուսելի չէ , քանի որ այնտեղ կարող է լինել նկար կամ կուռք : Այսպիսով այն առաջարկվում է միայն այն ժամանակ , երբ չկա որևէ այլ վայր աղոթելու : Օմարը ասաց Քրիստոնյաներին « Մենք չենք մտնում ձեր Եկեղեցիները , որովհետև այնտեղ , պատերին կան նկարներ :»

Թույլատրելի է ոչ մուսուլմանին մտնել մզկիթ , եթե դրա կարիքը կա , բացի Մեքքայի Մեծ Մզկիթից : Ինչ վերաբերվում է Մեդինային , Մարգարեն ( Խ.Ա.Ո.Ն ) հանդիպեց այնտեղ ոչ մուսուլմանական պատվիրակության :

Թույլատրելի է մուսուլմանին այցելել ոչ մուսուլմանի , ով հիվանդ է և խնդրել Աստծոց առողջություն նրանց համար : Անասը (թող Ալլահը զոհանա նրանով) ասաց , որ մի հրեա տղա հիվանդացավ և Մարգարեն ( Խ.Ա.Ո.Ն ) այցելեց նրան և ասաց . « **Դարձիր մուսուլման** » , նա նայեց իր հորը և հայրը ասաց **հիվանդ որդուն . « Ենթարկվիր Աբու Քասիմին ( Մուհամեդ Մարգարեյին ) »** այսպիսով նա ասաց **Հավատքի Վկայությունը և Մարգարեն ասաց . « Փառքը Ալլահին , ով փրկեց նրան Կրակից :**» (Բուխարի)

Մենք կարող ենք ցավակցել ոչ մուսուլմանին: Աբու Հուրեյրան ասել է , որ Մարգարեն ( Ի.Ա.Ո.Ն ) ասել է .« **Ես խնդրեցի թույլություն այցելելու իմ մոր գերեզմանը և այն շնորհվեց ինձ :**» (Մուսլիմ)

Կարելի է բարեգործություն անել ոչ մուսուլմանին , քանի դեռ նրանք չեն պատերազմել Մուսուլմանների դեմ : Աբդուլահ Իբն Ամրը մորթեց ոչխար և տվեց միս , որպես նվեր , իր հրեա հարևանին : Նա ասաց. « Ալլահի Մարգարեն ( Ի.Ա.Ո.Ն ) ասաց. « Գաբրիել Հրեշտակը տեղեկացրեց ինձ հարևանների իրավունքների մասին այնքան , մինչև ես մտածեցի , որ նրանց պիտի մասնաբաժին տալ ժառանգությունից:» Ամենակարող Ալլահն ասում է . « **Ջաբելի ծախսերը միայն աղքատների , կարիքավորների և այն մարդկանց համար է , ովքեր պիտի հավաքեն այն , որպեսզի բերեն սրտերը միասին ( առ Իսլամ ) , ինչպես նաև այն բանտարկյալների , կամ (ստրուկների) համար , և նաև նրանց , ովքեր պարտքերի մեջ են և հանուն Ալլահի և նաև նրանց , ովքեր ճամփորդներ են , և պարտավորվածությունը գանձվում է Ալլահից : Եվ Ալլահը Ամենախմաստունն և Իմացողն է :»**

Իսլամը թույլատրում է մուսուլմանին պահպանել իր ընտանիքը , նույնիսկ եթե նրանք մուսուլման չեն : Ասմա բնթ Աբու Բեքրը , եկավ Մարգարեյի( Ի.Ա.Ո.Ն ) մոտ և ասաց. «**Իմ մայրը այցելում է ինձ և նա ոչ մուսուլման է , նա ասաց , եղիր բարի քո մոր հետ :**» ( Բուխարի)

Թույլատրվում է մուսուլմանին ուտել ոչ մուսուլմանի սպասքից և օգտագործել նրանց հագուստները , եթե նրանք պատրաստված չեն նյութերից , որոնք արգելված են մեր համար : Աբու Թալաբահ ալ- Քուշեյնին , թող Ալլահը գոհանա նրանով , ասաց. « **Օ, Ալլահի Մարգարե , մենք մի երկրում ենք , որը պատկանում է Գրեթի Մարդկանց , Կարո՞ղ ենք մենք ուտել նրանց սպասքից :»** Նա ասաց. «**Եթե դուք կարող եք գտնել ուրիշ սպասք , ավելի լավ , եթե ոչ , ապա լվացեք և հետո օգտագործեք դրանք** »» ( Բուխարի)

Թույլատրելի է մուսուլման տղամարդուն ամուսնանալ ողջախոհ կնոջ հետ Գրեթի Մարդկանցից : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « **Այս օրը ( ամբողջ ) լավ ուտելիքը թույլատրելի է և Գրեթ տրված Մարդկանց ուտելիքը թույլատրելի է և ձեր ուտելիքը թույլատրելի է նրանց : Եվ ( թույլատրելի է ամուսնության համար) առաքինի կին հավատացյալներից և առաքինի կին նրանց միջից , ում տրված էր Գրեթ ձեզանից առաջ , և երբ դուք տվել եք նրանց իրենց արժանի փոխհատուցումը , ցանկանալով ողջախոհություն , այլ ոչ թե անօրինական սեքսուալ գործողություն կամ (գաղտնի) սիրուհու կարգավիճակ: Եվ ով մերժում է հավատքը , այս աշխատանքը դառնում է անարժեք , և նա , Հանդերձյալ կյանքում կլինի պարտվողների մեջ : » ( 5:5)**

Ով ընդունում է Իսլամ և ամուսնացած է Գրեթի Մարդկանց կնոջ հետ , նրա ամուսնությունը չի համարվի չեղյալ կամ ոչինչ , հակառակը , այն կլինի ընդունելի :

Թույլատրելի է ուտել ուտելիք Գրեթի Մարդկանց կողմից մորթված , քանի որ նրանք ասել են Աստծո անունը : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . **« Եվ մի կերեք այն , ինչի վրա Ալլահի անունը հիշատակված չէ , քանզի ճշմարիտ , այն մահվան չափ անհնազանդություն է :»** (6:121)

Մենք պիտի առաջարկենք պաշտպանություն ոչ մուսուլմանին , եթե նա փնտրում է այն : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . **« Եվ եթե որևէ մեկը բազմաստվածներից փնտրում է պաշտպանություն , ապա պարզևի նրան , քանի որ նա կարող է լսել Ալլահի խոսքը : Հետո տար նրան ապահով վայրը :»** (9:6)

• Մուսուլմանը չպիտի խոսի վատ ոչ մուսուլմանի հավատքի մասին : Ամենաբարձրյալ Ալլահն ասում . **« Եվ մի վիրավորի նրանց , ովքեր վկայակոչում են ուրիշին բացի Ալլահից , միգուցե նրանք վիրավորեն Ալլահին թշնամաբար առաց գիտակցելու »** (6:108)

• Ալլահը հրամայել է , որ մենք վճարենք մեր պարտքերը ոչ մուսուլմաններին : Նա , Ամենաբարձրյալը ասում է , **« Օ , Դուք ովքեր հավատցել են , լրացրու ( բոլոր ) համաձայնագրությունները :»** (5:1 ) Նա , Ամենաբարձրյալը նույնպես ասաց . **« Եվ լրացրեք ամեն պարտավորություն : Ճշմարիտ պարտավորությունն է հարցվում , ( թե որը կլինի ) :»** 17:34

• Նրանց հարստությունը անձեռնմխելի է : Ամենաբարձրյալ Ալլահն ասում է , **« Ալլահը չի արգելում ձեզ լինել առաքինի և վերաբերվել արդար նրանց հետ , ովքեր չեն մարտնչում ձեր դեմ կրոնի պատճառով , և չեն վտարում ձեզ ձեր տներից : Իրոք , Ալլահն սիրում է նրանց , ովքեր արդար են գործում :»** (60:8)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց . **« Նա , ով վնասում է ոչ մուսուլմանին , որը ապրում է Մուսուլմանական նահագում , կամ ստիպում է նրան կրել բեռ ավելի քան նրա հնարավորությունն է , ես կվիճարկեմ նրա անունից մուսուլմանների դեմ Հարության Օրը :»**

Մարգարեն նույնպես ասաց . **« Նա , ով սպանում է անձ , որը պահպանության համաձայնագիր ունի Մուսուլմանական երկրում , այդ անձը չի շնչի Դրախտի բույրը :»** (Բուխարի)

• Երբ ոչ մուսուլմանը բնակվում է մուսուլմանական կառավարության ներքո, նա ստանում է սոցիալական ծառայություններ ինչպես ցանկացած քաղաքացի, ով հասել է չափահաս տարիքի: Ումարը, թող Ալլահը գոհանա նրանով, տեսավ մի ծեր հրեայի և հարցրեց նրա մասին, որը ասաց, որ նա Ջիզյե գլխահարկ վճարողներից է: Այսպիսով Խալիֆը, Ումարը ասաց նրան. « **Մենք արդար չենք եղել քո նկատմամբ, մենք վերցրել ենք Ջիզյե քեզանից, երբ դու երիտասարդ էիր և հիմա դու ծերացել ես, դու ոչինչ չունես:** » Այսպիսով նա տարավ նրան ձեռքը բռնած Մուսուլմանական գանձերի մոտ և տվեց նրան ուտելիք և հագուստ: Հետո նա ասաց գանձապանին, « Գտիր նրա նման մարդիկ և տուր նրանց ինչ բավական է նրանց համար և նաև նրանց ընտանիքների: » Հետո նա արտաբերեց տարբերակ. « **Չաքեյի ծախսերը միայն աղքատ և կարիքավորների համար է:** » (9:60) Նա ասաց, որ աղքատ են կարիքավոր մուսուլմանները և Գրեթի Մարդիկ:

• Ալլահը բացել է թողության դարպասները նրանց համար, ոչ մուսուլմանների: Ամենաբարձրյալը ասում է. « **Ասա նրանց, ովքեր չեն հավատում, որ, եթե նրանք դադարեն, ինչ նախորդել է կներվի նրանց: Բայց, եթե նրանք վերադառնան թշնամության, ապա նախադեպը նախորդ ապստամբող մարդկանց տեղի կունենա:** » (8:38)

• Ուրիշներին լավություն ցանկացողը նույնպես հավատքի նշան է: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց Աբու Հուրեյրային. « Եղիր հնազանդ և դու կլինես ամենահնազանդը Ալլահին: Եղիր գոհունակ և դու կլինես ամենաշնորհակալը Ալլահին և սիրիր մարդկանց այն, ինչ դու սիրում ես քեզ համար և եղիր բարի նրանց, ովքեր քո հարևաններն են և դու կլինես ճշմարիտ մուսուլման և պակասեցրու քո ծիծաղը, քանզի այն կարող է խոցել մեկի սիրտը հոգեբանորեն: »

## **ԻՍԼԱՄԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԿԱԾ ՄԱՔՐՄԱՆ ՀԵՏ**

Իսլամում բոլոր երկրպագման գործողությունները հիմնված են հանդուրժողականության վրա, կարծես այն Իսլամում ներքին գիծ է: Ամենաբարձրյալ Ալլահն ասում է. « **Նրանք ովքեր հավատացել են և ում**

**սրտերը համոզված են Ալլահին հիշատակելով : Անկասկած , Ալլահին հիշելով սրտերը հաստատվում են :»(13:28)**

Ոչ ոք չափից ծանրաբեռնված չէ : Մարգարեն ( Խ.Ա.Ո.Ն ) ասաց. « **Իրոք , Ալլահը չի դադարի պարզատրել քեզ արարքների համար որոնք անում ես , մինչև դու դադարես անել արարքը ինքնին :**»

